ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ» ՈՒԿԿ ՄՊԸ

Ընկերության Խորհրդի նախագահ

Գոռ Մովսեսյան.....

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ

ՀՀ Կենտրոնական Բանկի նախագահ

Արթուր Ջավադյան.....

Digitally signed by Arthur Javadyan
Date: 2016.04.11 14:54:34 GMT+04:00
Reason: Գրանցված է 06.04.2016թ.

«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ»

ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

/նոր խմբագրությամբ/

Khoren Kerobyan

Digitally signed by Khoren Kerobyan
DN: cn=Khoren Kerobyan , c=AM, l=Yerevan, st=Yerevan, o="NOR HORIZON" UCO LLC, email=khoren@norhorizon.am
Date: 2016.03.17 15:41:56 +04'00'

ԵՐԵՎԱՆ 2016թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ » ՈՒՎԿ ՍՊԸ
Հոգաբարձուների խորհրդի
14/02/2006թ.թիվ 10/06 արձանագրությամբ

Փոփոխված է՝

«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ » ՈՒՎԿ ՍՊԸ ընդհանուր ժողովի
20/03/2007թ. թիվ 1/07արձանագրությամբ

«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ » ՈՒՎԿ ՍՊԸ ընդհանուր ժողովի
06/11/2007թ. թիվ 3/07արձանագրությամբ

«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ » ՈՒՎԿ ՍՊԸ արտահերթ ընդհանուր
ժողովի 17/01/2008թ. թիվ 1/08 արձանագրությամբ

«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ » ՈՒՎԿ ՍՊԸ ընդհանուր ժողովի
19/11/2010թ. թիվ 3/10 արձանագրությամբ

«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ » ՈՒՎԿ ՍՊԸ ընդհանուր ժողովի
20/09/2011թ. թիվ 2/11 արձանագրությամբ

«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ » ՈՒՎԿ ՍՊԸ արտահերթ ընդհանուր ժողովի
15/11/2012թ. թիվ 1/12 արձանագրությամբ

«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ » ՈՒՎԿ ՍՊԸ արտահերթ ընդհանուր ժողովի
25/04/2013թ. թիվ 2/13 արձանագրությամբ

«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ » ՈՒՎԿ ՍՊԸ արտահերթ ընդհանուր ժողովի
06/12/2014թ. թիվ 5/14 արձանագրությամբ

«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ » ՈՒՎԿ ՍՊԸ ընդհանուր ժողովի
12/03/2016թ. թիվ 1/16 արձանագրությամբ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. **«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը** (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է «Հորիզոն» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադիր) որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության «Վարկային Կազմակերպությունների մասին» օրենքի, Հայաստանի Հանրապետության «Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունների մասին» օրենքի և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի համաձայն:

1.2. Սույն Կանոնադրությամբ սահմանվում են Ընկերության անվանումը, գտնվելու վայրը, նպատակները, տեղեկություններ Ընկերության հիմնադրի մասին, Ընկերության Կանոնադրական Կապիտալի արժեքը, տնօրինման և կառավարման կարգը, Ընկերության հնարավոր շահառուների խմբերը, Ընկերության գործունեության ժամկետը, կառավարման մարմինների կազմավորման կարգը, քանակական կազմն ու իրավասությունները, նրանց կողմից որոշումների ընդունման կարգը, Ընկերության վերակազմավորման և լուծարման կարգերը:

1.3. Կանոնադրությունը պարունակում է «Վարկային Կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված, ինչպես նաև օրենքին չհակասող այլ դրույթներ:

1.4. Ընկերությունը ունի իր լրիվ և կրճատ անվանումը հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Ընկերության լրիվ անվանումն է՝

հայերեն՝ «ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն,

ռուսերեն՝ **Общество с Ограниченной Ответственностью «НОР ОРИЗОН» Универсальная Кредитная Организация**

անգլերեն՝ **«NOR HORIZON» Universal Credit Organization Limited Liability Company**

Ընկերության կրճատ անվանումն է՝

հայերեն՝ **«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ» ՈՒՎԿ ՍՊԸ**

ռուսերեն՝ ООО **«НОР ОРИЗОН» УКО**

անգլերեն՝ **« NOR HORIZON» UCO LLC**

1.5. Ընկերությունը Հիմնադրի կողմից ստեղծված առևտրային կազմակերպություն է, որը ստեղծված է վարկերի, փոխառությունների, խորհրդատվության տրամադրման և «Վարկային Կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և ենթաօրենսդրական իրավական ակտերով ունիվերսալ վարկային կազմակերպությունների համար թույլատրված գործունեության այլ տեսակների միջոցով մատուցելու ծառայություններ Հայաստանի Հանրապետության բնակչությանը, բնակչության եկամուտների ավելացման, սոցիալական վիճակի բարելավման, գործազրկության և միգրացիայի կրճատման նպատակներով:

1.6. Ընկերությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Վարկային Կազմակերպությունների մասին» և «Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ օրենքների ու իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, սույն Կանոնադրության և իր ներքին կանոնակարգերի հիման վրա:

1.7. Ընկերությունը գործում է օրինականության, կամավորության, ինքնակառավարման և հրապարակայնության սկզբունքներով:

1.8. Ընկերությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

1.9. Ընկերության գտնվելու վայրն է՝ Ընկերության գործադիր մարմնի գտնվելու վայրը. Հայաստանի Հանրապետություն, քաղ, Երևան, Կոմիտասի պող. 54 շենքի թիվ 150 շինություն:

1.10. Ընկերությունը կարող է ունենալ փոստային (էլեկտրոնային) հասցե: Ընկերության փոստային (էլեկտրոնային) հասցեով կամ գտնվելու վայրով փոստի կամ այլ թղթակցությունների առաքումը համարվում է պատշաճ առաքում:

1.11. Ընկերության աշխատանքային լեզուն հայերենն է:

1.12. Ընկերությունը ունի խորհրդանիշ (ապրանքային նշան), որի պատկերը և նկարագրությունը ներառվում է սույն Կանոնադրության մեջ որպես Հավելված 2:

1.13. Ընկերությունը ունի իր անվանումը պարունակող կլոր կնիք, որը պարունակում է Ընկերության անվանումը հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

1.14. Ընկերությունը ունի իր անվանումը և խորհրդանիշը պարունակող դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև անհատականացնող այլ միջոցներ:

1.15. Սույն Կանոնադրությունը Ընկերության հիմնադիր փաստաթուղթն է:

1.16. Սույն Կանոնադրության լրացումները և փոփոխությունները, ինչպես նաև նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունը ենթակա են պետական գրանցման՝ «Վարկային Կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և ՀՀ Կենտրոնական Բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով՝ ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ և ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Ընկերության առաքելությունն է իր տնտեսական գործունեության միջոցով նպաստել Հայաստանի Հանրապետությունում աղքատության հաղթահարմանը, տնտեսական ազատ և արդար մրցակցությանը տնտեսության փոքր և միջին ձեռներեցության ոլորտում, հեռավոր և սահմանամերձ շրջաններում նպաստել ֆինանսական ծառայությունների նույնանման հասանելիության ապահովմանը:

2.2. Ընկերության նպատակներն են՝

2.2.1. Նպաստել Հայաստանի Հանրապետության բնակչության տնտեսական և սոցիալական զարգացմանը՝ տրամադրելով փոխառու միջոցներ և խորհրդատվություն, ինչպես գործող, այնպես էլ նոր ստեղծվող փոքր ու միջին մասնավոր ձեռնարկություններին խթանելու և զարգացնելու համար նրանց տնտեսական գործունեությունը:

2.2.2. Գործող և նոր ստեղծվող ձեռնարկությունների տնտեսական գործունեության խթանման և ակտիվացման միջոցով նպաստել բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը, եկամուտների ավելացմանը, գործազրկության և միգրացիայի կրճատմանը:

2.2.3. Պահանջարկի հիմնավորումից և տնտեսական նպատակահարմարությունից ելնելով՝ փոխառությունների, վարկերի, տեխնիկական աջակցության և խորհրդատվությունների միջոցով օժանդակել այն տնտեսական ծրագրերի իրագործմանը, որոնց համար անհասանելի, կամ դժվար հասանելի են ֆինանսական այլ աղբյուրներ:

2.2.4. Պահանջարկի հիմնավորումից և տնտեսական նպատակահարմարությունից ելնելով Հայաստանի Հանրապետության բնակչությանը տրամադրել սպառողական, ձեռներեցության, գյուղատնտեսական, հիփոթեքային վարկեր և այլ ֆինանսական ծառայություններ, ինչով նպաստել բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

2.2.5. Միևնույն ժամանակ Ընկերության գործունեության նպատակը ֆինանսատնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումն է:

2.3. Իր նպատակներն իրագործելու համար Ընկերությունը կարող է ձեռնարկել սույն

Կանոնադրությունից բխող և օրենքով չարգելված այլ գործունեություն, մասնավորապես կազմակերպել սեմինարներ, մասնակցել դրանց աշխատանքներին, ինչպես նաև կազմակերպել հանդիպումների զարգացման ծրագրեր իրականացնող և դրանք ֆինանսավորող կազմակերպությունների հետ, հավաքագրել և հրապարակել Ընկերության գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվություն և այլն:

3. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՈՐՈՆՑՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԶԲԱՂՎԵԼ

3.1. Ելնելով իր և իր հիմնադրի կանոնադրական նպատակներից Ընկերությունը կարող է զբաղվել Հայաստանի Հանրապետության «Վարկային Կազմակերպությունների մասին» և « Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունների մասին» օրենքներով, այլ օրենքներով ու ենթաօրենսդրական իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Ունիվերսալ Վարկային Կազմակերպությունների համար թույլատրված ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակներով.

3.1.1 Տրամադրել վարկեր և փոխառություններ:

3.1.2 Տրամադրել երաշխիքներ:

3.1.3 Իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ):

3.1.4 Մատուցել ֆինանսական բնագավառին վերաբերող խորհրդատվություն:

3.1.5 Իրականացնել պարտքերի հետստացման գործունեություն:

3.1.6 Ընկերությունը կարող է իրականացնել կանխիկ ձևով արտարժույթի գնում և/կամ վաճառք միայն իր հաճախորդների վարկային պայմանագրերից ելնելով՝ արտարժույթով ստացված վարկի հետվճարման կատարման հետ կապված:

3.1.7 Ընկերությունը կարող է իրականացնել ապահովագրական գործակալի գործունեություն՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև մատուցել ներդրումային ծառայություններ առանց ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայի՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան:

3.1.8 Ընկերությունը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է իր գործունեությունն իրականացնելու համար:

3.1.9 ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությամբ Ընկերությունը կարող է իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված այլ գործառնություններ:

3.1.10 Ընկերությունը ինքն է որոշում իր կողմից տրամադրվող ծառայությունների սակագները:

3.1.11 Ընկերության և հաճախորդի միջև հարաբերությունները կարգավորվում են Օրենքով և կողմերի միջև կնքված պայմանագրերով, այդ թվում՝ հրապարակային պայմանագրերով:

3.2. Ելնելով իր կանոնադրական նպատակները իրականացնելու խնդիրներից Ընկերությունը կարող է միջոցներ ներգրավել իր հիմնադրից և այլ իրավաբանական անձանցից, հիմնականում միջազգային դոնոր և ինվեստիցիոն կազմակերպություններից, ուղղակիորեն բանակցելով այդ կազմակերպությունների հետ, առանց հրապարակային օֆերտաների դիմելու:

3.3. Ընկերությունը վարկավորում իրականացնում է կանխիկ և անկանխիկ, վարկերի հավաքագրման գործընթացները իրականացնում է և կանխիկ, և անկանխիկ եղանակով, բանկային փոխանցումների միջոցով: Կանխիկով գործարքների համար օրվա վերջում Ընկերության գլխամասում գտնվող դրամարկղի մնացորդը պետք է հանձնվի դրամապահոց:

4. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԻ ՄԱՍԻՆ: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Ընկերության հիմնադիր է հանդիսանում «Հորիզոն» հիմնադրամը. Իրավաբանական անձի պետական գրանցման վկայական 03Ա-056449, գրանցման համար 264.160.05978, գրանցման ամսաթիվը 25.10.2002, իրավաբանական հասցեն 375051, ք. Երևան, Կոմիտաս 44: Գործադիր տնօրեն՝ Գոռ Մովսեսյան:

4.2 Ընկերության մասնակիցներ են համարվում այն անձինք, ովքեր նշված են սույն Կանոնադրության Հավելված 1-ում:

4.3 Ընկերությունը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար:

4.4 Ընկերության մասնակիցները պատասխանատու չեն ընկերության պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

4.5. Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն՝

4.5.1. տեղեկատվություն ստանալ Ընկերության գործունեության մասին, ծանոթանալ հաշվապահական հաշվառման, Ընկերության տնտեսական գործունեության այլ փաստաթղթերի հետ.

4.5.2. ստանալ Ընկերության գործունեությունից ստացվող շահույթի (շահութաբաժնի) իրենց պատկանող մասը.

4.5.2.1.Ընկերության մասնակիցների շահութաբաժինների բաշխումը իրականացվում է /ընկերության զուտ շահույթից/ տարեկան մեկ անգամ:

4.5.3. մասնակցել Ընկերության կառավարմանը հանդես գալ առաջարկություններով, առանց քվեարկելու և որոշում կայացնելու իրավունքի, սակայն Կառավարման մարմինների կողմից իրականացվող քննարկումներին մասնակցելու և առաջարկություններով հանդես գալու: Փոքր բաժնեմաս ունեցող մասնակիցները անհրաժեշտության դեպքում իրենց ընդհանուր թվից ընտրում են մեկ անձի /մասնակցի/, որը որպես ներկայացուցիչ, իրենց անունից հանդես կգա Ընկերության Ընդհանուր Ժողովի և Խորհրդի նիստերին գրավոր և բանավոր առաջարկություններով հանդես գալու նպատակով:

4.5.4. օգտվել Ընկերության կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:

4.5.5. Ընկերության լուծարման դեպքում ստանալ շահույթի /գույքի/ իր հասանելիք մասը.

4.5.6. Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած գույքի մասը կամ դրա արժեքը.

4.5.7. հայցով դիմել դատարան՝ Ընկերության Ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

4.5.8. Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում ստանալ համապատասխան քանակությամբ բաժնեմասեր.

4.5.9. Ընկերության մասնակիցները իրենց սեփականությունը հանդիսացող բաժնեմասերը (դրանց մասը) վաճառելու կամ այլ՝ օրենքով չարգելված ձևով օտարելու կամ այլ անձանց փոխանցելու իրավունք /վաճառք, նվիրատվություն, ժառանգություն, զիջել և այլն/: Ընդ որում, մյուս մասնակիցներն ունեն այդ բաժնեմասը գնելու նախապատվության իրավունք: Մասնակիցների կողմից իրենց վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չիրականացնելու դեպքում բաժնեմասերը կարող են օտարվել երրորդ անձանց: Մասնակիցների նախապատվության իրավունքի (այլ մասնակիցների կողմից վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է 30 օր: Մասնակիցների նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը չի կիրառվում այն դեպքում, երբ իրենց բաժնեմասերը կամ դրանց մի մասը օտարելու ցանկություն են հայտնել Ընկերության բոլոր մասնակիցները

միաժամանակ: Ընկերության բաժնեմասերի շուկայական արժեքի որոշման անհրաժեշտության դեպքում հաշվի է առնվում Ընկերության զուտ ակտիվների մեծությունը: Այդ դեպքում կողմերից որևէ մեկի պահանջով պետք է բաժնեմասերի արժեքը (կամ Ընկերության զուտ ակտիվների մեծությունը) սահմանվի անկախ գնահատողի (աուդիտորի) կողմից:

4.5. Անձը և վերջինիս հետ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Ընկերության կանոնադրական կապիտալում կարող են ձեռք բերել բաժնեմասերի 10 (տաս) տոկոսից ավելին միայն ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

4.6.*Ընկերության մասնակիցները պարտավոր են՝*

4.6.1. չհրապարակել գաղտնի տեղեկություններ Ընկերության գործունեության վերաբերյալ.

4.6.2. կատարել սույն Կանոնադրության և Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջները

4.6.3. Ընկերությունը պարտավոր է մասնակցին վճարել բաժնեմասի արժեքը Ընկերությունից դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահից՝ 6 ամսվա ընթացքում: Վճարման ենթական բաժնեմասի արժեքը որոշվում է Ընկերությունից դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահին ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվությունների հիման վրա:

4.7. Ընկերության մասնակիցը (մասնակիցները), որը (որոնք) գումարային առումով տնօրինում է (են) Ընկերության առնվազն 10 (տաս) տոկոս բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել Ընկերության այլ մասնակցի հեռացումն Ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում է կամ անհնարին է դարձնում Ընկերության բնականոն գործունեությունը:

Ընկերությունից հեռացված մասնակցի բաժնեմասն անցնում է Ընկերության տրամադրության տակ: Ընկերությունը պարտավոր է հեռացված մասնակցին վճարել բաժնեմասի արժեքը Օրենքով և սույն կանոնադրության 4.8 կետով սահմանված կարգով:

4.8. Այն մասնակիցը, որը սույն կանոնադրությամբ կամ օրենսդրությամբ սահմանված իր պարտականությունները չի կատարում կամ ոչ պատշաճ ձևով է կատարում, կամ իր գործողություններով խոչընդոտում է Ընկերության նպատակներին հասնելուն, կարող է հեռացվել Ընկերությունից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.9.Ընկերությունից հեռացվող մասնակցի բաժնեմասը Ընկերությունը պարտավոր է գնել սույն կանոնադրության 4.6.3. կետում նշված կարգով, հակառակ դեպքում օտարվող բաժնեմասը առաջարկվում է Ընկերության այլ մասնակիցներին, իսկ վերջում երրորդ անձանց, վաճառքի անհնարինության դեպքում Ընդհանուր Ժողովը որոշում է ընդունում Կանոնադրական կապիտալի նվազեցման մասին.

4.10.Բաժնեմասի կամ գույքի արժեքը որոշվում է դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահին Ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվությունների հիման վրա.

4.11. մասնակիցը պարտավոր չէ վերադարձնել իր կողմից բարեխղճորեն ստացած շահույթը:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐԺԵՔԸ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 *Ընկերության Կանոնադրական Կապիտալը կազմում է 650.000.000 (վեց հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ, որից 580.000.000 (հինգ հարյուր ութսուն միլիոն) ՀՀ դրամ փայով՝ 89%-ի մասնակից-բաժնետեր է հանդիսանում Ընկերության հիմնադիր՝ "Հորիզոն" Հինադրամը, իսկ մնացած 70.000.000 /յոթանասուն միլիոն/ ՀՀ դրամ փայով՝ 11 % -ի մասնակից-բաժնետերեր են հանդիսանում Ընկերության աշխատակիցները:*

5.2 Ընկերության բաժնեմասերը կարող են գրավադրվել միայն Ընկերության Բարձրագույն Մարմնի՝ Ընդհանուր Ժողովի համաձայնությամբ:

5.3 Ընկերության մասնակից քաղաքացու մահվան կամ իրավաբանական անձի իրավահաջորդության դեպքում՝ Ընդհանուր Ժողովի համաձայնությամբ բաժնեմասը

անցնում է քաղաքացու ժառանգներին կամ մասնակից իրավաբանական անձի իրավահաջորդներին:

5.4 Հիմնադիրը Ընկերությանը բացի Կանոնադրական Կապիտալից կարող է փոխանցել նաև այլ դրամական միջոցներ և գույք Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված ձևերով Ընկերության աշխատանքներ կազմակերպելու նպատակով:

5.5 Ընկերությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք:

5.6 Ընկերության գույքը հանդիսանում է Ընկերության սեփականությունը:

5.7 Ընկերության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց: Ընկերության սեփականության ներքո գտնվող գույքի քանակը և արժեքը չի սահմանափակվում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5.8 Ընկերության գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

ա) Հիմնադրի ներդրումը,

բ) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

գ) դրամաշնորհները,

դ) Ընկերության և իր կողմից կամ իր մասնակցությամբ ստեղծած տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,

ե) օրենքով չարգելված այլ միջոցները:

5.9 Ընկերությունը օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով իր հայեցողությամբ տիրապետում, տնօրինում և օգտագործում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, այդ թվում՝ իր գույքը, որպես սեփականություն, օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

5.10 Ընկերության գույքի տնօրինումը և կառավարումն իրականացվում է սույն Կանոնադրությամբ և Ընկերության խորհրդի կողմից սահմանված կարգով:

5.11 ՀՀ տարածքում Ընկերության սեփականությունը գտնվում է ՀՀ պաշտպանության ներքո:

5.12 Ընկերության սեփականությունը կարող է բռնագանձվել միայն դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում:

6.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Ընկերությունը ստեղծված է համարվում և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման և լիցենզավորման պահից:

6.2 Ընկերությունը իրավաբանական անձ է և ունի իր հիմնադրի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում:

6.3 Ընկերությունը ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ:

6.4 Ընկերությունը ունի սույն Կանոնադրությամբ նախատեսված գործունեության նպատակներին համապատասխան քաղաքացիական իրավունքներ և կրում է այդ գործունեության հետ կապված պարտականություններ:

6.5 Ընկերությունը իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ողջ գույքով: Կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

6.6 Ընկերությունը իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացել բանկային

հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով:

6.7 Ընկերությունը սույն Կանոնադրության նպատակներին համապատասխան, իրավունք ունի՝

6.7.1.1 Նյութապես աջակցել ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

6.7.2 Անարգել տարածել տեղեկատվություն իր գործունեության մասին:

6.7.3 Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար:

6.7.4 Ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ), ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում: Հայաստանի Հանրապետությունում ստեղծվելու դեպքում դրանք իրավունք կունենան գործել ՀՀ ԿԲ-ում հաշվառվելուց հետո, իսկ արտերկրում ստեղծվելու դեպքում դրանք կարող են բացվել և գործել համապատասխան պետության օրենքների համաձայն:

6.7.5 Ընկերությունը հաստատում է իր մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնակարգերը, որոնցում սահմանվում են դրանց իրավասությունները և լուծարման կարգը:

6.7.6 Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների բացումը, հաշվառումը և լուծարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ նախատեսված կարգով:

6.7.7 Ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները գործում են Ընկերության անունից, վերջինիս կողմից իրենց վերապահված լիազորությունների սահմաններում: Վարկային կազմակերպությունը պատասխանատու է իր մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության համար:

6.7.8 Ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները ֆինանսական գործառնություններ են իրականացնում ՀՀ օրենսդրության համաձայն (դրամով կամ արտարժույթով), սույն Կանոնադրության և համապատասխան մասնաճյուղի կամ ներկայացուցչության կանոնադրության համապատասխան:

6.7.9 Ստեղծել Տնտեսական Ընկերակցություններ և/կամ Ընկերություններ և լինել նրանց մասնակից, ինչպես նաև լինել Հասարակական Կազմակերպությունների /Միությունների, Միավորումների/ անդամ, մասնակից:

6.7.10 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևով ձեռք բերել գույք, այդ թվում արժեքթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը:

6.7.11 Ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, դրամաշնորհներ , օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով ձեռք բերել և իրացնել արժեթղթեր, այդ թվում՝ արտարժույթով, օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր:

6.7.12 Օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու:

6.7.13 Ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքել պայմանագրեր:

6.7.14 Իր կանոնադրական նպատակների իրականացման համար իրավաբանական անձանցից, իր հիմնադրից, Հայաստանի Հանրապետությունից և համայնքներից, այլ պետություններից, միջազգային և տեղական կազմակերպություններից ներգրավել փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ:

6.7.15 Օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույք, ծառայություններ մատուցել և կատարել աշխատանքներ օտարերկրյա իրավաբանական անձանց և/կամ քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած

աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և/կամ անդամակցել իրավաբանական անձանց և/կամ օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

6.7.16 Իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:

6.8 Ընկերությունը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն Կանոնադրությանը համապատասխան, կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին:

6.9 Ընկերության իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

6.10 Ընկերությունը քաղաքացիական իրավունքները ձեռք է բերում և իրականացնում իր կամքով և ի շահ իրեն:

6.11 Ընկերությունը պարտավոր է՝

6.11.1 Գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Վարկային Կազմակերպությունների մասին» և « Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ օրենքների ու իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, սույն Կանոնադրության և իր ներքին կանոնակարգերի համապատասխան:

6.11.2 Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում:

6.11.3 Իր կանոնադրական նպատակների իրականացման համար փոխառություններ ներգրավելիս չդիմել հրապարակային օֆերտաների:

6.11.4 Օրենքով և ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հաստատված նորմատիվ իրավական ակտերով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն տրամադրել ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ:

6.11.5 Ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկերի, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը:

6.11.6 Իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Վարկային Կազմակերպությունների մասին» և «Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ օրենքներով և ՀՀ Կենտրոնական Բանկի իրավական ակտերով և այլ իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

6.12 Ընկերությունը պատասխանատվություն չի կրում պետության, իսկ պետությունը պատասխանատվություն չի կրում Ընկերության պարտավորությունների համար:

6.13 Ընկերության Հիմնադիրը պատասխանատու չէ իր ստեղծած Ընկերության պարտավորությունների, իսկ Ընկերությանը իր հիմնադրի պարտավորությունների համար:

6.14 Ընկերությունը իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:

6.15 Անօրինական գործունեություն ծավալելու համար Ընկերությունը և նրա պաշտոնատար անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

7 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՔԱՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄՆ ՈՒ

ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

7.1 Ընկերությունը իր գործունեությունն իրականացնում է իր մարմինների միջոցով:

7.2 Ընկերության մարմիններն են՝

ա) Ընկերության Ընդհանուր ժողովը

բ) Ընկերության Խորհուրդը,

գ) Ընկերության Գործադիր տնօրենը:

7.3 *Ընկերության բարձրագույն մարմինը Ընկերության Ընդհանուր ժողովն է,* որը կազմված է "Հորիզոն" հիմնադրամի հոգաբարձուների խորհրդից, ի դեմս «Հորիզոն» հիմնադրամի գործադիր տնօրեն և «ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ» ՈՒՎԿ ՍՊԸ Խորհրդի նախագահ՝ Գոռ Մովսեսյանի և Ընկերության մասնակից-բաժնետերերից:

7.3.1 Ընկերության Ընդհանուր ժողովը լինում է հերթական և արտահերթ: Ընկերության հերթական ժողովները գումարվում են տարին մեկ անգամ:

7.3.2 Ընկերության Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

7.3.3 Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը և ռազմավարական ծրագրի (ծրագրերի), առաջիկա երեք տարիների համար կազմված գործարար ծրագրի հաստատումը:

7.3.4 Ընկերության կանոնադրության և կանոնադրական կապիտալի մեջ փոփոխությունների և լրացումների կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը:

7.3.5 Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների և Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը, Ընկերության շահույթի օգտագործման և կորուստները ծածկելու կարգի սահմանումը և հաստատումը:

7.3.6 Ընկերության վերակազմավորման և լուծարման մասին որոշման ընդունումը:

7.3.7 Ընկերության Խորհրդի՝ որպես մշտական գործող մարմնի անդամների ընտրության նրանց վարձատրության չափի և նաև նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը:

7.3.8 Ընկերության Գործադիր տնօրենի՝ որպես մշտական գործող մարմնի ընտրության և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը:

7.3.9 Ընկերության Ներքին աուդիտորի կամ Ներքին աուդիտի Բաժնի պետի՝ որպես մշտական գործող բաժնի ղեկավար, ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման, ներքին աուդիտի գործունեության կանոնակարգի հաստատման մասին որոշումների ընդունումը:

7.3.10 Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու Ընկերության կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին որոշումների ընդունումը:

7.3.11 Ընկերության անկախ աուդիտ իրականացնող անձի կամ ընկերության (աուդիտորի) ընտրությունը և դրա վարձատրության չափի որոշումը: Ընդհանուր Ժողովի որոշմամբ ընտրված անկախ աուդիտ իրականացնող ընկերության կողմից իրականացվում է նաև Վերստուգիչ հանձնաժողովի /վերստուգողի/ գործառույթները և իրավասությունները: Միևնույն ժամանակ Ընկերության Ընդհանուր ժողովը պարտավոր է փոխել Ընկերության աուդիտորին անընդմեջ 2 / երկու/ տարվա ստուգումները իրականացնելուց հետո:

7.3.12 Ընկերության կողմից օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով արժեթղթեր, գույքային և ոչ գույքային իրավունքով ձեռք բերելու և իրացնելու մասին որոշումների ընդունումը:

7.3.13 Հայաստանի Հանրապետության օրենքներով և սույն Կանոնադրությամբ Ընկերության այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

7.3.14 Ընկերության Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերը Ընկերության կանոնադրությամբ չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

7.4 Ընկերության կառավարում և հսկողություն իրականացնող մարմինը Ընկերության խորհուրդն է:

7.4.1 Ընկերության խորհուրդն հաշվետու է Ընկերության Ընդհանուր Ժողովին :

7.4.2 Ընկերության խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձինք:

7.4.3 Ընկերության խորհրդի կազմը կազմավորում է Ընկերության Ընդհանուր ժողովը: Ընկերության խորհրդի քանակական կազմը սահմանվում է ոչ պակաս քան 3 (երեք) անդամից:

7.4.4 Ընկերության խորհրդի նախագահ հանդիսանում է Ընկերության հիմնադրի գործադիր տնօրենը:

7.4.5 Ընկերության խորհրդի նախագահի, ինչպես նաև խորհրդի անդամների պաշտոնը կարող է լինել վճարովի:

7.4.6 Ընկերության խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարման համար կարող են վարձատրվել համաձայն Ընկերությյան Ընդհանուր Ժողովի որոշման: Համաձայն որոշման բացակայության դեպքում առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով: Ընկերության խորհրդի անդամների համար կարող են նաև սահմանվել պարգևատրումներ և փոխհատուցում նրանց այն ծախսերի համար, որոնք կապված են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Պարգևների և փոխհատուցման վճարման կարգը սահմանում է Ընկերության Ընդհանուր Ժողովը:

7.4.7 Ընկերության խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը սահմանվում է 3 (երեք) տարի:

7.4.8 Ընկերության խորհրդի անդամի լիազորությունները դադարում են Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված հիմքերով:

7.4.9 Ընկերության խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

7.4.10 Ընկերության գույքի տնօրինման և կառավարման կարգի հաստատումը:

7.4.11 Ընկերության վարկային հանձնաժողովի՝ որպես մշտական գործող հանձնաժողովի անդամների, ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման, վարկային հանձնաժողովի գործունեության կանոնակարգի հաստատման մասին որոշումների ընդունումը:

7.4.12 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը:

7.4.13 Առնվազն եռամսյակը մեկ անգամ և ֆինանսական տարվա արդյունքներով Ընկերության Գործադիր տնօրենի հաշվետվությունների լսումը, նրա կողմից Ընկերության միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացումը:

7.4.14 Օտարերկրյա, միջազգային ինչպես նաև տեղական /Հայաստանյան/ կազմակերպություններից՝ ներդրումներ, անտոկոս փոխառություններ, վարկեր ներգրավելու վերաբերյալ որոշման կայացումը:

7.4.15 Իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը, Ընկերության գույքի պահպանմանը հետևելը, փաստաթղթերի, այդ թվում՝ հաշվեկշռի ստուգումը:

7.4.16 Ընկերության պաշտոնատար անձանց գույքային պատասխանատվության ենթարկելու մասին որոշումների ընդունումը:

7.4.17 Ընկերության կողմից օրենքով սահմանված կարգով վարկերի և փոխառությունների տրամադրման քաղաքականության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների կատարումը:

7.4.18 Ընկերության գործունեությունը կանոնակարգող ներքին այլ փաստաթղթերի հաստատման մասին որոշումների ընդունումը:

7.4.19 Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն Կանոնադրությամբ,

ինչպես նաև Ընկերության այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

7.4.20 Ընկերության խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը Ընկերության կանոնադրությամբ չեն կարող փոխանցվել այլ մարմնի, բացառությամբ Ընկերության Ընդհանուր ժողովին:

7.4.21 Խորհրդի անդամների մասնավոր կամ այլ հասարակական պարտավորությունները չեն կարող հակասել Ընկերության խորհրդի անդամի՝ իրենց պարտականություններին:

7.4.22 Ընկերության խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են եռամսյակը մեկ անգամ՝ խորհրդի նախագահի կողմից: Խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև խորհրդի անդամներից մեկի պահանջով՝ խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացնելուց 15 օրվա ընթացքում: Խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ:

7.4.22 Եթե նշված ժամկետում խորհրդի նախագահը նիստ չի հրավիրվում, ապա նիստը կարող են հրավիրվել նման պահանջը ներկայացրած անձինք:

7.4.23 Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը:

Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.4.24 Եթե խորհրդի նիստում քննարկվում է Ընկերության խորհրդի որևէ անդամի և նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

7.4.25 Խորհրդի նիստերում նրա յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

7.5 Խորհրդի նախագահը՝

7.5.1 Կազմակերպում է խորհրդի աշխատանքները:

7.5.2 Գումարում է խորհրդի նիստերը և նախագահում դրանք:

7.5.3 Կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրության վարումը:

7.5.4 Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, Ընկերության Ընդհանուր ժողովի որոշմամբ, կատարում է անդամներից մեկը:

7.6 Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր տնօրենը:

7.6.1 Գործադիր տնօրենի իրավասությանն է պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով և սույն Կանոնադրությամբ Ընկերության Ընդհանուր ժողովի և Ընկերության խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի:

7.6.2 Ընկերության գործադիր տնօրենը կազմակերպում է Ընկերության Ընդհանուր ժողովի և խորհրդի որոշումների կատարումը:

7.6.3 Ընկերության գործադիր տնօրենն ընտրվում և պաշտոնից ազատվում է Ընկերության Ընդհանուր ժողովի կողմից:

7.6.4 Ընկերության գործադիր տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են «Սահմանափակ պատասխանատվությամբ Ընկերություններ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն Կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով: Ընկերության անունից պայմանագիրը ստորագրում է խորհրդի նախագահը:

7.4.5 Ընկերության գործադիր տնօրենը՝

7.4.6 Ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետության կառավարության և պետական գերատեսչությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ հարաբերություններում

7.4.7 Տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

գործարքներ է կնքում Ընկերության անունից:

7.4.8 Ներկայացնում է Ընկերությանը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում:

7.4.9 Գործում է առանց լիազորագրի:

7.4.10 Տալիս է ընկերության անունից գործելու լիազորագրեր:

7.4.11 Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային:

7.4.12 Բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ:

7.4.13 Ընկերության Ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու կազմակերպության կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը:

7.4.14 Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ աշխատակիցներին և աշխատակազմի անդամներին և վերահսկում դրանց կատարումը:

7.4.15 Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին:

7.4.16 Աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

7.4.17 Իրականացնում է Ընկերության խորհրդի կողմից սահմանված այլ լիազորություններ:

7.4.18 Գործարքը կամ մի քանի փոխկապակցված գործարքներ, որոնք կապված են Ընկերության կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ, որի (որոնց) արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվա դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալի մինչև 5% տոկոսը, կատարվում է Ընկերության գործադիր տնօրենի որոշմամբ:

7.4.19 Ընկերության Գործադիր տնօրենն այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Ընկերության Ընդհանուր ժողովի համաձայնությամբ:

7.4.20 Ընկերության Ընդհանուր ժողովը իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել Ընկերության Գործադիր տնօրենի հետ կնքված պայմանագիրը՝ ՀՀ օրենսդրությամբ, սույն Կանոնադրությամբ և Աշխատանքային պայմանագրով սահմանված կարգով:

7.4.21 Ընկերության Գործադիր տնօրենը նշանակվում է Ընկերության Ընդհանուր ժողովի կողմից 1 (մեկ) տարի ժամկետով:

7.5 Ընկերության մարմինների ժողովներն և նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 3 (երեք) օրվա ընթացքում՝ առնվազն երկու օրինակով, որը ստորագրում են տվյալ Նիստը նախագահողը և Քարտուղարը: Նիստը նախագահողը պատասխանատվություն է կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

7.6 Արձանագրության մեջ նշվում է՝

ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը,

բ) նիստին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակը,

գ) նիստին մասնակցած անձանց թիվը,

դ) նիստի օրակարգը:

Արձանագրությունը պետք է պարունակի նիստում կայացած ելույթների, զեկույցների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, նիստի կողմից ընդունված որոշումները:

8.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

8.1 Ընկերության գործունեության ժամկետը սահմանվում է անժամկետ:

9. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9.1 Ընկերության աշխատակիցների և Ընկերության միջև աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

9.2 Ընկերությունն ապահովում է օրենքով երաշխավորված աշխատանքի վարձատրության նվազագույն չափը և աշխատանքային պայմանները:

9.3 Ընկերության գրասենյակում ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում պահպանվում են.

9.3.1 Ընկերության կանոնադրությունը և հիմնադիր պայմանագիրը /որոշումը/ ու դրանցում կատարված փոփոխությունները և լրացումները.

9.3.2 Ընկերության հիմնադիր ժողովի և Ընդհանուր ժողովների արձանագրությունները /որոշումները/.

9.3.3 Ընկերության գրանցումը և լիցենզավորումը հավաստող փաստաթղթերը.

9.3.4 Ընկերության հաշվեկշռում գտնվող գույքի նկատմամբ Ընկերության իրավունքը հաստատող փաստաթղթերը.

9.3.5 Ընկերության ներքին գործունեության փաստաթղթերը.

9.3.6 Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների ու հիմնարկների փաստաթղթերը.

9.3.8 Ներքին աուդիտի /ներքին աուդիտորի/, ինչպես նաև իրավասու պետական մարմինների կողմից Ընկերության ֆինանսական գործունեությունը ստուգելու մասին փաստաթղթերը.

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1 Ընկերության գործունեության արդյունքներն արտացոլվում են Ընկերության ֆինանսական, վիճակագրական, հարկային հաշվետվություններում, Ընկերության կողմից սահմանված կարգով ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում:

10.2 Ընկերությունը կազմում և օրենքով սահմանված ժամկետներում մամուլում հրապարակում է տարեկան և եռամսյակային ֆինանսական, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված այլ հաշվետվություններ՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված ձևերով:

10.3 Ընկերության գործառնական տարին սկսվում է հունվարի 1-ից և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

10.4 Ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումը իրականացնում է գլխավոր հաշվապահը /ֆինանսական տնօրենը/: Այդ նպատակով գլխավոր հաշվապահը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում՝ ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար:

10.5 Ընկերության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունների ներկայացումը կատարվում է անընդհատության, հետևողականության, հաշվեգրման, հասկանալիության, էականության, միասնականության, արժանահավատության, համադրելիության, հաշվանցման, սահմանազատման, ինչպես նաև հաշվապահական հաշվառման ստանդարտներով նախատեսված այլ սկզբունքների հիման վրա:

10.6 Գլխավոր հաշվապահը կազմակերպում և սպասարկում է Ընկերության ընթացիկ գործունեության հաշվապահական և հաշվետվական համակարգերը: Նա հաշվետու և ենթակա է անմիջականորեն գործադիր տնօրենին:

10.7 Գլխավոր հաշվապահի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով, սույն կանոնադրությամբ, Ընկերության ներքին իրավական ակտերով և Ընկերության հետ կնքված աշխատանքային պայմանագրով: Գլխավոր հաշվապահը կազմում է ղեկավարությանը և երրորդ անձանց ներկայացվող ֆինանսական, վիճակագրական և հարկային հաշվետվությունները և պատասխանատու է դրանց համար:

10.8 Գլխավոր հաշվապահը իրականացնում է Ընկերության գործունեության հաշվապահական վերահսկողությունը, իրականացնում է բյուջեի կատարման վերահսկողությունը և հաշվետվություններ է ներկայացնում Խորհրդին, Գործադիր տնօրենին:

10.9 Գլխավոր հաշվապահը իրականացնում է սույն կանոնադրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

11. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

11.1. Ընկերության ներսում, սահմանված պահանջների կատարումը և ապահովումը վերահսկելու նպատակով ստեղծվում է ներքին աուդիտ /ներքին աուդիտոր/: Ներքին աուդիտը կատարում է հետևյալ գործառույթները.

ա) Ապահովում է Ընկերության գործունեության համապատասխանությունը ՀՀ գործող օրենսդրության պահանջներին, ներքին իրավական ակտերին և Գործադիր տնօրենի հրամաններին:

բ) Վերստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները,

գ) Վերլուծում է Ընկերության գործունեության, դրա աշխատակիցների մասնագիտական գործունեության, ինչպես նաև Ընկերության պաշտոնատար անձանց կողմից լիազորությունների չարաշահման դեպքերի վերաբերյալ տեղեկություններ և հաշվետվություններ,

դ) Վերստուգումն ավարտելուց հետո եզրակացություններ և առաջարկություններ է ներկայացնում Ընկերության Գործադիր տնօրենին և Խորհրդի նախագահին:

ե) Կատարում է Ընկերության գործունեության ներքին վերստուգման և աուդիտի հետ կապված այլ գործառույթներ:

12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

12.1 Ընկերության վերակազմակերպումը

12.1.1 Ընկերությունը կարող է կամավոր վերակազմակերպվել Ընդհանուր Ժողովի որոշմամբ:

12.1.2 Ընկերությունը կարող է վերակազմակերպվել բաժնետիրական ընկերության:

12.1.3 Ընկերության վերակազմակերպումն իրականացվում է Օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններում:

11.2 Ընկերության լուծարումը

Ընկերության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց նրա իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելը:

12.3 Ընկերությունը լուծարվում է՝

12.3.1 Լիցենզիան անվավեր ճանաչելու դեպքում.

12.3.2 Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում.

12.3.3 «Բանկերի և Վարկային Կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում.

12.3.4 Ինքնալուծարման դեպքում.

12.3.5 Օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքերով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

*«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ» ՈՒՎԿ ՍՊԸ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է **650.000.000** (վեց հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ:*

Ընկերության բաժնեմասերը տեղաբաշխված են Ընկերության մասնակիցների միջև հետևյալ կերպ՝

«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ» ՈՒՎԿ ՍՊԸ
ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Հ/Հ	ՄԱՍՆԱԿԻՑ	Բաժնեմասի Անվանական արժեքը ՀՀ դրամով	Բաժնեմասի չափը (տոկոս %)
1.	"Հորիզոն" Հիմնադրամ	580.000.000	89 %
2.	Գոռ Մովսեսյան	10.000.000	1.5 %
3.	Խորեն Քերոբյան	8.000.000	1.3 %
4.	Խաչատրյան Մոնիկա	3.000.000	0.5 %
5.	Սարգսյան Ցանա	3.000.000	0.5 %
6.	Հակոբյան Գագիկ	3.000.000	0.5 %
7.	Թևանյան Ռոբերտ	3.000.000	0.5 %
8.	Հակոբյան Արմեն	3.000.000	0.5 %
9.	Բեջանյան Գագիկ	3.000.000	0.5 %
10.	Աբրահամյան Լիլիա	3.000.000	0.5 %
11.	Հովհաննիսյան Հովհաննես	3.000.000	0.5 %
12.	Դոլբակյան Ժաննա	2.000.000	0.3 %
13.	Խերանյան Օնիկ	2.000.000	0.3 %
14.	Շավարշյան Վիգեն	2.000.000	0.3 %
15.	Խաչատրյան Գևորգ	2.000.000	0.3 %
16.	Բեջանյան Վասիլ	2.000.000	0.3 %
17.	Բեջանյան Սիլվա	2.000.000	0.3 %
18.	Նազարեթյան Հեղինե	2.000.000	0.3 %
19.	Փարամազյան Աշոտ	2.000.000	0.3 %
20.	Խաչատրյան Համլետ	2.000.000	0.3 %
21.	Հակոբյան Գարիկ	2.000.000	0.3 %
22.	Զաքոյան Դավիթ	2.000.000	0.3 %
23.	Հարությունյան Արսեն	2.000.000	0.3 %
24.	Սարգսյան Աշոտ	2.000.000	0.3 %
25.	Մուրադյան Արփինե	2.000.000	0.3 %
		ԸՆԴԱՄԵՆԸ	100%